

* * *

Ոսկանի մասին գրած պրոֆ. Մակլերի բիրլիոգրաֆիական, ես կկամենայի ասել նաև կենսագրական, ակնարկը, ուրվագծում է Ամստերդամի հայ տպարանի գրեթե ամբողջ պատմությունը: Ոսկանի ծնողները բնիկ երևանցիներ էին: Նրանց բոնի կերպով Խսպահան էր քչեւ Շահ-Աբբասը 17-րդ սկզբներին: Այդ քաղաքում ծնվեց, հետագայում հայ տպագրիչ, նրանց որդին Ոսկանը՝ խաչատուր Կեսարացու աշակերտը և Սիմոն Զուղայեցու դասընկերն էր: Հետագայում վերջինս գրում է հայերեն քերականություն և այլ գրքեր. նա մեռնում է 1657 թ. Թոկատում, որը գտնվում է Սև ծովի մոտ շատ ավելի արևմուտք, բայց Սամսոնից հարավ...

Ոսկանը առաջին անգամ գնաց էջմիածին կաթոլիկ Մովսեսի ընկերակցությամբ, որի շնորհիվ նա վերադարձավ իր ծննդավայրը: Երբ Ֆիլիպոսը գրավեց էջմիածնի բարձր քահանայական աթոռը, Ոսկանը կանչվեց ներկայանալու նրան: Ծիշտ այդ ժամանակ էջմիածնում



Նկ. 1. Ոսկանի 1666 թ. Ամստերդամում տպագրած հայերեն Աստվածաշնչի Մագնուսի կազմը: Փարիզի ազգային գրադարան:



Նկ. 2. Հայերեն Աստվածաշնչի Մագնուսի կազմը՝ Լեյդենի համալսարանական գրադարանում:

էր գտնվում Դոմինիկյան միաբանության լատին վանական Պ. Պաուլո Պիրոմեյին, որին հայերեն անվանում են Սիդերնացի: Վերջինս Ուրբանոս 8-րդ պապի կողմից ուղարկված է եղել Արևելք: Հայտնի է, որ նա այցելել է Միջագետք, Վասպուրական (Վան), Արարատ և էլի ուրիշ շրջաններ... Հայ քահանայի և լատին վանականի միջև տեղի ունեցան փոխանակություններ լեզվական հատկանիշների մասին. ավելին, նրանք գրադվեցին նույնիսկ թարգմանություններով: Պիրոմեյին շուրջ տարի անցկացրեց էջմիածնում, որից հետո նա վերադարձավ Հոռոմ տանելով իր հետ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը՝ համեմատած լատինական տեքստի հետ: Վերադառնալով Հոռոմ Պիրոմեյին շատ աշխատեց տպագրել Աստվածաշնչի թարգմանությունը, սակայն մերժվեց: Ապա նա վերադարձավ էջմիածին նպատակ ունենալով Ոսկանի հետ միատեղ բարեփոխությունների մտցնելու իրենց թարգմանության մեջ: Հավանական է Ոսկանը Պիրոմեյինի հետ միասին հետո մեկնել է Արևմուտք, անձամբ փորձելու տպագրել Աստվածաշունչը մի քանի ուրիշ երկրի հետ, որ նա այդ ժամանակի ընթացքում արդեն պատրաստել էր: Զմյուռնիայից նա մեկնեց Լիվորնո, որտեղ բնակվում էին շատ հարուստ հայ վաճառականներ և որտեղ դեռ 1640 թվականին արդեն հիմնված էր հայկական եկեղեցի: Ֆինանսական աջակցություն, որը խնդրեց նա հայ վաճառականներից Աստվածաշնչի տպագրության համար, մերժվեց: Բացի այդ, որոշ օրենքներ արգելում էին, որ երկու միանման ձեռնարկություններ գոյություն ունենան կողք-կողքի: Ոսկանն այդ ժամանակ դնաց Հոռոմ, որտեղ նա հանդիպեց նույն գովարություններին, ինչ-որ Պիրոմեյին: Ապա նա նորից վերադարձավ Լիվորնո, որտեղ նրան